

Նպատակ 16: Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը

Կայուն զարգացման նպատակներից 16-րդը նվիրված է հանուն կայուն զարգացման խաղաղ և ներառական հասարակությունների կառուցմանը, բոլորի համար արդարության հասանելիության ապահովմանը և բոլոր մակարդակներում արդյունավետ, պատասխանատու հաստատությունների ստեղծմանը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Խաղաղ, արդար և ներառական հասարակություններն անհրաժեշտ են Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար:

Ո՞րն Է նպատակը

Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը, ապահովել բոլորի համար արդարության հասանելիություն և բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, պատասխանատու ու ներառական հաստատություններ:

Ինչո՞ւ

Խաղաղ, արդար և ներառական հասարակություններն անհրաժեշտ են Կայուն զարգացման նպատակներին (ԿՁՆ) հասնելու համար: Ամենուրեք մարդիկ պետք է զերծ լինեն բռնության բոլոր ձևերի վախից և իրենց կյանքում զգան ապահով՝ անկախ ազգային, կրոնական կամ սեռական կողմնորոշումից:

ԿՁՆ-ների առաջխաղացման համար անհրաժեշտ են արդյունավետ և ներառական պետական հաստատություններ, որոնք կարող են ապահովել որակյալ կրթություն և առողջապահություն, արդար տնտեսական քաղաքականություններ ու շրջակա միջավայրի համապարփակ պաշտպանություն:

Ի՞նչ Է անհրաժեշտ այս խնդիրը լուծելու համար

Խաղաղության, արդարության և ներառականության հասնելու համար կարևոր է, որ կառավարությունները, քաղաքացիական հասարակությունն ու համայնքներն աշխատեն միասին՝ մշտապես իրագործելու բռնության նվազեցման, արդարության ապահովման, կաշառակերության դեմ պայքարի և ներառական մասնակցության ապահովման համար տևական լուծումներ:

Անհրաժեշտ է երաշխավորել մասնավոր շփումներում և հրապարակայնորեն կարծիք արտահայտելու ազատությունը: Մարդիկ պետք է հնարավորություն ունենան մասնակցելու իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը: Անհրաժեշտ է օրենքները և քաղաքականությունները կիրառել առանց որևէ խտրականության: Վեճերը պետք է լուծվեն գործող քաղաքական և արդարադատության համակարգերի միջոցով:

Համապետական և տեղական հաստատությունները պետք է լինեն պատասխանատու և հասանելի՝ ընտանիքների ու համայնքների համար արդարացիորեն և առանց կաշառքի անհրաժեշտության ապահովելու հիմնական ծառայությունները:

Ինչպե՞ս է այս նպատակն առնչվում ինձ, որտեղ էլ ես ապրեմ

Հանցագործությունները, որոնք սպառնում են խաղաղ հասարակությունների ձևավորմանը, այդ թվում՝ սպանությունները, թրաֆիքինգը և այլ կազմակերպված հանցագործությունները, ինչպես նաև խտրական օրենքներն ու սովորություններն ազդում են բոլոր երկրների վրա: Նույնիսկ աշխարհի ամենակայացած ժողովրդավարական երկրները լուրջ մարտահրավերների են բախվում կաշառակերության, հանցավորության և մարդու իրավունքների խախտման խնդիրների համակողմանի հաղթահարման հարցում:

Ի՞նչ կարծենա այսօր քայլեր չձեռնարկելը

Չինված բռնությունը և անապահովությունը կործանիչ ազդեցություն ունեն երկրների զարգացման վրա: Դրանք ազդում են տնտեսական աճի վրա և հաճախ հանգեցնում երկարատև դժգոհությունների համայնքների շրջանում:

Բռնությունը՝ իր բոլոր դրսևորումներով, լայնորեն ազդում է հասարակությունների վրա: Բռնությունը ներգործում է երեխաների առողջության, զարգացման ու բարեկեցության, ինչպես նաև հաջողության հասնելու նրանց կարողության վրա: Այն վնասում և թուլացնում է սոցիալական ներառականությունը:

Արդարադատության սահմանափակ հասանելիության պատճառով հակամարտությունները մնում են չլուծված, և մարդիկ չեն կարողանում ստանալ պաշտպանություն ու փոխհատուցում: Հաստատությունները, որոնք չեն գործում օրինակարգ օրենքներին համաձայն, հակված են կամայականության ու իշխանության չարաշահման և բոլորին հանրային ծառայություններով ապահովելու ավելի քիչ կարողություն ունեն:

Անտեսումը և խտրականությունը ոչ միայն խախտում են մարդու իրավունքները, այլ նաև առաջացնում դժգոհություն ու թշնամական տրամադրվածություն և կարող են հանգեցնել բռնության:

Ի՞նչ կարող ենք անել

Իրական հետաքրքրություն ցուցաբերեք ձեր կառավարության գործունեության նկատմամբ: Ձեր համայնքում բարձրացրեք հանրային իրազեկվածությունը բռնության իրողությունների և խաղաղ ու արդար հասարակության կարևորության մասին, և պարզեք՝ ինչպես կարող եք առօրյա կյանքում հետամուտ լինել Կայուն զարգացման նպատակների իրագործմանը:

Իրացրեք ձեր իրավունքը՝ հաշվետու պահելու ընտրված պաշտոնյաներին: Իրացրեք տեղեկատվության ազատության ձեր իրավունքը և ձեր կարծիքը հասցրեք ձեր ընտրած ներկայացուցիչներին:

Դո՛ւք եղեք փոփոխությունը - խթանեք ներառականությունը և հարգեք տարբեր ծագում, ազգային, կրոնական, գենդերային պատկանելություն, սեռական կողմնորոշում կամ տարբեր կարծիքներ ունեցող մարդկանց: Միասին մենք կարող ենք աջակցել բոլորի համար արժանապատիվ կյանքի պայմանների ստեղծմանը:

Կայուն զարգացման նպատակների և 16-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>